ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 11

«14» 03 2019թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ՆԻՍՏՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՄԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան 2019 թվականի փետրվարի 27-ի նիստում քննարկել է Հայաստանի Հանրապետության դատախազության 2018 թվականի աշխատանքի արդյունքները և ընդունել համապատասխան որոշում, որի կենսագործումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 22-րդ հոդվածի 5-րդ մասով և 30-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Ապահովել Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2019 թվականի փետրվարի 27-ի նիստում ընդունված որոշման կենսագործումը (27.02.2019թ. նիստի N 1 արձանագրությունը կցվում է):

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալների վրա՝ ըստ նրանց հանձնարարված ոլորտների:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Արձանագրություն N 1

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի
2019 թվականի փետրվարի 27-ի նիստի

Նախագահում էր՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը:

Մասնակցում էին
կոլեգիայի անդամներ՝ Արմ.Հարությունյանը, Հ.Ասլանյանը, Դ.Մելքոնյանը, Վ.Հարությունյանը, Արտ.Հարությունյանը, Ա.Մարուխյանը, Վ.Ռաֆայելյանը, Գ.Պողոսյանը, Ե.Ավագյանը, Ա.Սիմոնյանը, Ա.Փանոսյանը և Գ.Բաղդասարյանը:

Ներկա էին՝ ՀՀ դատախազության ավագ դատախազներ Կ.Կարապետյանը, Ա.Նիկողոսյանը, Վ.Ջանազյանը, ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերի տեղակալները, ավագ դատախազներն ու դատախազները, ՀՀ զինվորական դատախազի տեղակալները, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազները, բաժինների պետերը, բաժինների ավագ դատախազներն ու դատախազները, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազները, դատախազների տեղակալները, Երևան քաղաքի ու վարչական շրջանների դատախազությունների ավագ դատախազներն ու դատախազները, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականներն ու օգնականները, ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարը:

Հրավիրվել և կոլեգիայի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ՀՔԾ պետ Ս.Խաչատրյանը, գլխավոր քարտուղար Դ.Սուքիասյանը, ՀՀ ՊԵԿ քննչական վարչության պետի պաշտոնակատար Ա.Գասպարյանը, ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի պետ Ա.Աղաջանյանը, ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ Ա.Սարգսյանը, շտաբի պետ Ա.Ղուկասյանը, ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետ Ա.Մելիքյանը, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Հովսեփյանը, «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Սուչյանը, ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Մ.Բիշարյանը, ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության պետ Լ.Սաֆարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության դատախազության 2018թ. աշխատանքի արդյունքների ամփոփումը:

Զեկուցողներ՝

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ՝ Ա.Հարությունյան, Դ.Մելքոնյան, Հ.Ասլանյան:

Լսեցին՝ Ա.Հարությունյանին, Դ.Մելքոնյանին, Հ.Ասլանյանին:

Արտահայտվեցին՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Հովսեփյանը:

Լսելով և քննարկելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներ Ա.Հարությունյանի, Դ.Մելքոնյանի և Հ.Ասլանյանի զեկուցումները Հայաստանի Հանրապետության դատախազության 2018 թվականի աշխատանքի արդյունքների մասին՝ Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան նշում է, որ համակարգի մարմինները, իրականացնելով ՀՀ Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով իրենց վերապահված լիազորությունները, ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ, ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով, զգալի աշխատանք են կատարել հանրապետությունում օրինականությունը պահպանելու և հանցավորության դեմ համակարգված ու արդյունավետ պայքար կազմակերպելու, քննության որակը բարելավելու, հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության և պատժի անխուսափելիությունն ապահովելու ուղղությամբ:

Այսպես.

2018թ. Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է հանցագործության 22551 դեպք, նախորդ տարվա 20284 դեպքի դիմաց: Փաստորեն, նախորդ տարվա համեմատությամբ գրանցված հանցագործության դեպքերն աճել են 2267-ով կամ 11,2 %-ով: Հաշվի առնելով, որ գրանցված դեպքերից 3755-ով հաղորդումները վերաբերել են նախորդ տարիներին կատարված հանցագործություններին, ապա կարելի է արձանագրել, որ բացարձակ 2018թ. ընթացքում կատարված հանցագործությունների թիվը կազմում է 18796 (2017թ.՝ 16865), այսինքն՝ 2018թ. ընթացքում կատարված հանցագործությունների թիվն աճել է 1931-ով:

Հաշվետու ժամանակահատվածում հանցավորության շարժընթացի վերլուծությունը վկայում է, որ, թեև ընդհանուր հանցավորության քանակական ցուցանիշն աճել է, սակայն առանձին հանցատեսակներով արձանագրվել է հանցավորության մակարդակի նվազում: Հանցագործության դեպքերի աճն ապահովվել է առավելապես միջին ծանրության՝ 6700 և ծանր 3638 հանցագործությունների դեպքերի հաշվին, իսկ 2018թ. արձանագրված հանցագործությունների տեսակարար կշռում շարունակել է բարձր մնալ ոչ մեծ ծանրության հանցագործությունների թվաքանակը:

Փաստորեն, 2017թ. համեմատ, 2018թ. արձանագրված հանցագործությունների ընդհանուր թվում ոչ մեծ ծանրության հանցագործությունների տեսակարար կշիռը նվազել է 7,9%-ով (61%-53,1%), միջին ծանրության հանցագործություններինն աճել է 6,4%-ով (29,7%-23,3%), ծանր հանցագործություններինը՝ 2,7%-ով (13,4%-16,1%), առանձնապես ծանր հանցագործություններինը՝ 0,2%-ով (0,8%-1%):

Ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների ընդհանուր թվաքանակի աճին զուգահեռ, 2018թ. էական նվազում է արձանագրվել հանրային մեծ վտանգավորություն ունեցող այնպիսի հանցատեսակներով, ինչպիսիք են սպանությունը և դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը:

Այսպես, 2018թ. արձանագրվել է սպանության՝ վերջին 38 տարիների ընթացքում ամենացածր ցուցանիշը. 35 դեպք, այսինքն՝ 2017թ.-ից 14-ով կամ 28,6%-ով պակաս, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու 1023 դեպք՝ 2017թ.՝ 1113-ի դիմաց, 18-ով կամ 17,6%-ով նվազել են նաև սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները: Սեփականության դեմ ուղղված հանցագործություններից ամենավտանգավորի՝ ավազակության դեպքերի գրանցված թվաքանակը 2017թ. համեմատ նույնն է՝ 46 դեպք: Դրան հակառակ՝ 2018թ. արձանագրվել է սպանության փորձի դեպքերի աճ՝ 2017թ. արձանագրվել է սպանության փորձի 23 դեպք, 2018թ.՝ 30 կամ 30,4%-ով ավելի:

Արձանագրվել է անձնական ունեցվածքի հափշտակության դեպքերի 1453-ով կամ 19,5%-ով աճ և գրանցվել է անձնական գույքի հափշտակության 8886 դեպք՝ 2017թ. արձանագրված 7433 դեպքի դիմաց:

Դրանց թվում են նաև բնակարանային գողությունը, որն աճել է 549-ով կամ 61,8%-ով՝ գրանցվել է բնակարանային գողության 1438 դեպք:

2018թ. հանրապետությունում արձանագրվել է հրազենի գործադրմամբ կատարված 60 դեպք (2017թ. 52), հատկապես ավելացել են հրազենի գործադրմամբ կատարված սպանության փորձերի՝ 8-ից 12, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու՝ 2-ից 5, դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու՝ 3-ից 5, ավազակության՝ 8-ից 15 դեպքերը: Դրան զուգահեռ, հաշվետու տարում նվազել են լատենտայնության բարձր աստիճան ունեցող հրազենի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքերը՝ 2017թ. գրանցվել է 858 դեպք, 2018թ.՝ 674, 184-ով կամ 21,4%-ով պակաս, որի բացահայտումը 90,5% է:

2018թ. նվազել է լատենտայնության բարձր աստիճան ունեցող՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների թիվը՝ 2017թ. գրանցվել է 1138 դեպք, իսկ 2018թ.՝ 738, կամ 400-ով կամ 35,1%-ով պակաս:

2018թ. աճել է ինչպես ճանապարհատրանսպորտային հանցագործությունների 311-ով (972-1283) կամ 32%-ով, այնպես էլ մահվան ելքով ավտովթարների թիվը՝ 44-ով (176-220) կամ 25%-ով:

Կոլեգիան փաստում է, որ առավելապես անհանգստացնող է համարվում բնակարանային գողությունների դեպքերի զգալի աճը: Այս հանցատեսակի առումով շեշտվեց հանցագործության դեպքերի քարտեզագրման և դրա արդյունքում առավել ռիսկային գոտիներն առանձնացնելուց հետո կանխարգելիչ միջոցառումների ակտիվացման անհրաժեշտությունը՝ հատկապես ոստիկանության պարեկային ծառայությունների թիրախային գործունեության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ բազմաբնակարանային շենքերն անվտանգության տեխնիկական միջոցներով հագեցնելու առումով:

Կարևորվեց ինչպես նշված, այնպես էլ մնացած հանցագործությունները ծնող պատճառների ու պայմանների վերացման նպատակով դատախազների կողմից պատկան մարմիններին միջնորդություններ ներկայացնելու դատախազական գործառույթի ակտիվացումը և դրա հետագա ընթացքի նկատմամբ խիստ հետևողականությունը:

Մինչդատական քրեական վարույթի օրինականության ապահովման շրջանակներում քննարկման առարկա դարձան նաև անչափահասների նկատմամբ ընտրվող խափանման միջոցների, ինչպես նաև քրեական գործերով նշանակվող փորձաքննությունների և դրանց արդյունքների օպերատիվ ստացման հետ կապված խնդիրները:

Հանցագործությունների դեպքերի աճին զուգընթաց՝ 2018թ. արձանագրվել է հանցագործությունների բացահայտման ցուցանիշի նվազում:

2018թ. արձանագրվել է առանձին հանցատեսակների բացահայտման տոկոսի աճ, մասնավորապես, սպանության, ավազակության և տրանսպորտային միջոցը փախցնելու դեպքերի, որոնց բացահայտումը 2018թ. կտրվածքով կազմել է համապատասխանաբար՝ 74,6%, 66,7% և 93,4% (2017թ.՝ 73,5%, 63,1% և 91,8%):

Բացի այդ, 2018թ. ընթացքում բացահայտվել է նախկին տարիներին կատարված հանցագործությունների 594 դեպք (2017թ.՝ 317), 277-ով կամ 46,6 %- ով ավելի:

2018թ. հանցանք կատարած անձանցից 299-ը նախկինում հանցանք կատարած անձինք են եղել: Փաստորեն, 2017թ. համեմատ, 2018թ. կրկնահանցագործների թիվը նվազել է 171-ով կամ 36,4%-ով:

2018թ. ընթացքում հետախուզվել է 15924 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 2410-ը կամ 15.1 %-ը: 2017թ. համեմատությամբ հետախուզվողների թիվն ավելացել է 665-ով կամ 4.3 %-ով: Հետախուզվողների հայտնաբերման քանակական ցուցանիշը բարելավվել է 576-ով կամ 3.1%-ով:

Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ.

2018թ. դատախազական հսկողություն է իրականացվել 45.392 ավարտված նյութերի նախապատրաստման նկատմամբ (2017թ.՝ 40.727): Նյութերից 30145-ով կամ 66,4%-ով կայացվել են որոշումներ՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին: Փաստորեն, 2017թ. համեմատ, 2018թ. կայացված քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների թիվն ավելացել է 2387-ով կամ 8,5%-ով:

Ավարտված 45392 նյութից 13698-ով կամ 30,1 %-ով հարուցվել է քրեական գործ (2017թ.՝ 10367), որոնցից 335-ը կամ 2,4%-ը հարուցվել են նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման վերացման արդյունքում (2017թ.՝ 286 կամ 2,7%): Փաստորեն, 2017թ. համեմատ, 2018թ. նախապատրաստված նյութերով հարուցվել է 3331-ով կամ 32,1%-ով ավելի քրեական գործ:

2018թ. արձանագրվել է 4 դեպք, երբ հսկող դատախազի կողմից վերացվել է ոչ արդարացնող հիմքով կայացված քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը և որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը արդարացնող հիմքով մերժելու մասին:

2018թ. ընթացքում դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել 6506 ավարտված քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ: Ավարտված քրեական գործերի թիվը նվազել է 544-ով կամ 7,7%-ով:

2018թ. քրեական գործերից 1932-ը կամ 10%-ը՝ 2373 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 70-ը կամ 0,3%-ը դատարան է ուղարկվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությամբ, 4504-ը կամ 23,4%-ը կարճվել են: 2018թ. ընթացքում դատախազական հսկողության ներքո գտնված քրեական գործերից 6489-ը կամ 33,8%-ը կասեցվել են:

2017թ. ընթացքում դատախազական հսկողության ներքո է գտնվել ընդհանուր թվով 14.934 քրեական գործ, որոնցից 2334-ը կամ 15,6%-ը հաշվետու ժամանակահատվածում մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 103-ը կամ 0,6%-ը դատարան է ուղարկվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությամբ, 2.763-ը կամ 18,5%-ը կարճվել է, 5292-ը կամ 35,4%-ը՝ կասեցվել:

Փաստորեն, 2017թ. համեմատ, 2018թ. կարճվել է 1741-ով կամ 63%-ով ավելի քրեական գործ, իսկ 2019թ. են փոխանցվել (նախաքննության ընթացքի մեջ են եղել) 590-ով կամ 19,3%-ով ավելի քրեական գործեր:

2018թ. ընթացքում վերացվել են քրեական գործով վարույթը կարճելու մասին 233 որոշումներ (2017թ՝.271): Փաստորեն, 2017թ. համեմատ, 2018թ. դատախազի կողմից վերացված՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումների թիվը 38-ով կամ 14%-ով պակաս է եղել:

2018թ. ընթացքում վերացվել է քրեական հետապնդում չիրականացնելու մասին 32 որոշում (2017թ.՝ 37), վերացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 14 որոշում (2017թ.՝ 23): 2018թ. ընթացքում դատախազի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերի կիրառմամբ չի հաստատվել մեղադրական եզրակացությամբ ստացված 77 քրեական գործ (2017թ.՝ 72):

2018թ. ընթացքում վերացվել է քրեական գործով վարույթը կասեցնելու մասին 260 որոշում (2017թ.՝ 209), դատախազների կողմից տրվել է 1644 ցուցում (2017թ.՝ 1907):

2018թ. ընթացքում վարույթի մասնակիցների կողմից դատական կարգով բողոքարկվել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին 183 որոշում (2017թ.՝ 655): Դատավարության մասնակիցների կողմից բողոքարկվել է քրեական գործով վարույթը կասեցնելու մասին 27 որոշում (2017թ.՝ 32): Դատավարության մասնակիցների կողմից բողոքարկվել է քրեական գործով վարույթը կարճելու մասին 102 որոշում (2017թ.՝ 385):

2018թ. ընթացքում քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավված 6582 անձից 870-ի կամ 13.2%-ի վերաբերյալ դատարան է ներկայացվել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություն (2017թ.՝ 1087), որոնցից 804-ը կամ 92,4%-ը բավարարվել է (2017թ.՝ 998 կամ 91.8%), դատախազի որոշմամբ խափանման միջոց կալանավորումը վերացվել է 51 անձի նկատմամբ, հետ է վերցվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ մեղադրյալի կալանավորման ժամկետը երկարացնելու մասին քննիչի 8 միջնորդություն (2017թ.՝ 5): 2018թ. ընթացքում

կալանավորման այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ կիրառելու դեպքերն աճել են 82-ով կամ 63.62%-ով:

ՀՀ դատախազության կողմից անցնող տարում մշտական ուշադրության կենտրոնում են պահվել առանց բավարար հիմքերի մեղադրյալին անազատության մեջ պահելը բացառելու և մեղադրյալի՝ անազատության մեջ գտնվելու հիմքերի առկայության պայմաններում նրա՝ ազատության մեջ չհայտնվելու և, ըստ այդմ, նախաքննության շահի լիարժեք ապահովման հարցերը:

2018թ. ընթացքում դատարան է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացնելու մասին 808 միջնորդություն, որոնցից բավարարվել է 793-ը կամ 98,2%-ը:

Հաշվետու ժամանակաշրջանում դատախազի կողմից քրեական գործով վարույթից հեռացվել է 145 քննիչ (2017թ.՝ 157), ներկայացվել է ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ 317 միջնորդություն:

2018թ. ընթացքում ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից կատարվել է 1313 ուսումնասիրություն, ստուգում և ամփոփում: Կատարված ստուգումների արդյունքում արձանագրված խախտումներով ՀՀ քրեական դատավարական օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նախապատրաստվել է 88 նյութ, որոնցից հարուցվել է 37 քրեական գործ:

2018թ. ընթացքում արձանագրվել է 304 անչափահասի կողմից կատարված հանցագործության 350 դեպք (2017թ.՝ 341 անչափահասի կողմից՝ 397 դեպք):

2018թ. ընթացքում բացահայտված հանցագործությունների դեպքերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 84.869.951.060 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 27.775.221.334 ՀՀ դրամը, իսկ շուրջ 6.922.245.802 դրամի վնաս, առկա դրամական միջոցներով, երաշխավորված է քրեադատավարական անհրաժեշտ գործիքակազմով, այն է՝ այդ չափով առկա արժույթի կամ արտարժույթի վրա դրված կալանքով:

Դատարաններում մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ.

2018թ. ընթացքում նվազել է ինչպես դատարան ուղարկված քրեական գործերի թիվը (1996 գործ՝ 2449 անձ (2017թ.՝ 2387 գործ՝ 2875 անձ)), այնպես էլ դատարաններում քննված քրեական գործերի թիվը (2094 քրեական գործ՝ 2503 անձ (2017թ.՝ 2177 քրեական գործ՝ 2643 անձ): 1477 գործով դատապարտվել է 1766 անձ, ինչը 26%-ով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից (2017թ. 1849 գործով դատապարտվել է 2233 անձ):

2018թ. ընթացքում դատարաններում քննված 2094 գործից 69-ով (3.2%) մեղադրվող 2503 անձից 106-ը (4,2%) արդարացվել է ամբողջությամբ (2017թ.՝ 68 գործով (3,1%) 101 անձ), այդ թվում՝ առաջին ատյանի դատարանների կողմից արդարացվել է 53 գործով 90 անձ, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից՝ 16 գործով 16 անձ:

Լրիվ և մասնակի արդարացման դատական ակտերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ դատարանների կողմից շարունակվում է այն մոտեցումը, երբ նախաքննական ցուցմունքներին՝ դատարանում տրվածների համեմատությամբ նվազ ապացուցողական արժեք է տրվում և դատարանները նույն անձի կողմից նախաքննության

ընթացքում տված ցուցմունքի համեմատությամբ նրա փոփոխված դատաքննական ցուցմունքը հիմք ընդունելիս սահմանափակվում են՝ բացառապես փաստելով, որ ավելի արժանահավատ է դատաքննությամբ տված ցուցմունքը: Դատարանները բազմաթիվ դեպքերում անտեսել են դատարանում ապացույցների բովանդակության փոփոխությունների հաճախ սուբյեկտիվ, բայց ակնհայտ պատճառները: Արդյունքում՝ դատարանում այլ տեղեկություններ հայտնելու որևէ պատճառ չնշող, ակնհայտ ոչ ողջամիտ պատճառ նշող կամ դեպքից մեկուկես տարի անցնելուց հետո միայն դեպքի մանրամասները, բազմաթիվ անձանց կոնկրետ գործողությունները այլ կերպ ու ավելի մանրամասն հիշող անձի ցուցմունքները դիտվում են ավելի արժանահավատ, քան նախաքննական ցուցմունքները:

Արդարացման դատավճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բավականին նվազել են ապացույցի անթույլատրելիության հանգեցնող քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումները, ինչպիսիք են՝ քննչական գործողություններ կատարելիս դատավարության լեզվի սկզբունքի, քննչական գործողությունների կատարմանը ընթերականների մասնակցության կանոնների, վկայի դատավարական կարգավիճակում՝ առանց մեղադրյալի նվազագույն իրավունքների ապահովման, անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննության դատավարական կարգի խախտումները:

Շարունակում են մտահոգիչ լինել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի սխալ, ոչ պատշաճ ձևակերպումները, ինչին բազմիցս անդրադարձ է եղել դատախազության կոլեգիայի նիստերում, օպերատիվ խորհրդակցություններում կամ կոնկրետ գործերի վերահսկողության շրջանակներում:

2018թ. ընթացքում մեղադրողները 11 գործով հրաժարվել են մեղադրանքից, որոնցով դատարանները կայացրել են արդարացման դատավճիռներ:

2018թ. ընթացքում դատարանների կողմից 12 անձ արդարացվել է մասնակի (2017թ.՝ 17 անձ)՝ մեղադրանքի մի մասով կամ դրա առանձին դրվագով:

Արդարացման դատական ակտերի դեմ մեղադրողների կողմից բերվել է 53 վերաքննիչ բողոք, որոնցից 22-ը մերժվել է, 6-ը՝ բավարարվել, 25-ն ընթացքի մեջ է: Արդարացման դատական ակտերի դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերվել է 26 վճռաբեկ բողոք, որոնցից 17-ով վարույթ ընդունելը մերժվել է, 4-ով՝ լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 5-ով որոշում է կայացվել բողոքը վարույթ ընդունելու մասին, որոնք ընթացքի մեջ են:

Դրական ցուցանիշ կարելի է համարել 2018թ. ընթացքում 2017թ. համեմատությամբ դատապարտված անչափահասների թվի 18%-ով, դատապարտված կանանց թվի 14%-ով, նախկինում հանցանք կատարած անձանց թվի 29 %-ով նվազումը:

2017թ. համեմատությամբ արագացված դատական քննության կարգի կիրառմամբ քննված քրեական գործերի թիվը հաշվետու ժամանակահատվածում նվազել է շուրջ 7%-ով:

Ուսումնասիրությունը վկայում է, որ թեև դատական քննության արագացված կարգ կիրառելու հարցի կապակցությամբ մեղադրողի դիրքորոշման հիմքերի հստակության, այդ կապակցությամբ մոտեցումների միասնականացման խնդիրը հիմնականում լուծվել է ՀՀ դատախազության կոլեգիայի որոշմամբ տրված՝ այդ առարկությունների հիմքերը սահմանող մեկնաբանությունների հիման վրա, սակայն դեռևս առկա են դեպքեր, երբ դատական

քննության արագացված կարգ կիրառելու դեմ մեղադրողների միջնորդությունները չեն ընդունվել և քրեական գործերը քննվել են արագացված կարգով, քանի որ ՀՀ դատախազության կոլեգիայի որոշմամբ սահմանված պայմանները, մեղադրական եզրակացությունները հաստատելու մասին դատախազների որոշումներում ներկայացվել են առանց հիմնավորումների:

Հաշվետու ժամանակահատվածում դատական պրակտիկայի անընդունելի դրսևորումներից մեկն էլ հենց դատարանների կողմից վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներն անտեսելն ու անչափահասների վերաբերյալ գործերով արագացված կարգ կիրառելն է այն դեպքում, երբ մեղադրողները ևս առարկել են դրա դեմ՝ վկայակոչելով դատական իրավունքն այն մասին, որ անչափահասների վերաբերյալ գործերն արագացված դատական քննության կարգով քննվել չեն կարող:

2018թ. ընթացքում դատապարտված անձանց գրեթե 40%-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկումը, ինչը 2,6%-ով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերը նախորդ տարվա համեմատությամբ նվազել են 1,3 %-ով:

Պատժողական քաղաքականության խնդիրների վերաբերյալ կոլեգիան փաստում է, որ դրանցից ամենակարևորն ու միաժամանակ ամենաբարդը կոնկրետ հանցագործությունների համար պատժողական քաղաքականության միասնականացման խնդիրն է: Բանն այն է, որ առանձին դեպքերում արձանագրվել են կոնկրետ հանցագործության համար տարբերվող խիստ կամ մեղմ պատիժներ միջնորդելու դեպքեր: Պետք է փաստել, որ մինչ օրս ուսումնասիրության և քննարկման առարկա դարձած հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով, որոնցով սահմանվել են պատժողական քաղաքականության որոշակի ուղղություններ, յուրաքանչյուր դեպքում պատիժ միջնորդելիս դրա տեսակը, չափը, այն կրելու նպատակահարմարությունը գնահատելու չափանիշները, արձանագրվել է պրակտիկայի միասնականացման միտում:

Արձանագրված մյուս խնդիրն անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելն է: Առկա են դեպքեր, երբ դատարանների կողմից անչափահասի նկատմամբ պատիժ է նշանակվում տուգանք, սակայն գործով փաստական տվյալ չկա այդ պատժատեսակը անչափահասի նկատմամբ նշանակելու պայմանի՝ ինքնուրույն վաստակի առկայության մասին:

2018թ. ընթացքում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ եթե 2016թ. ընթացքում դատարանները անչափահաս ամբաստանյալների նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս լրացուցիչ պարտականություն են սահմանել անչափահաս դատապարտյալների միայն 16,6%-ի նկատմամբ, ապա 2017թ.-ին՝ 7%-ի: Փաստորեն, հանցագործություն կատարած, ազատազրկման դատապարտված, սակայն պատիժը պայմանականորեն չկիրառված անչափահասի ուղղմանը դատարանների կողմից բավարար միջոցներ չեն ձեռնարկվում, քանի որ վիճահարույց է, թե անչափահասի կողմից սոսկ բնակության վայրը չփոխելը ինչ նշանակություն կարող է ունենալ նրա ուղղման և նոր հանցանքի կատարումը բացառելու համար:

Անչափահասի վերաբերյալ յուրաքանչյուր քրեական գործով, մեղադրողների կողմից պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու ընթացքում, պետք է հաշվի առնվեն քրեական գործի փաստական հանգամանքները և ամբաստանյալի անձը բնութագրող առանձնահատկությունները, կատարված հանցագործության պատճառները: Դատապարտյալի ուղղման՝ որոշակի գործողություններ կատարելու կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալու պարտավորություն սահմանելու վերաբերյալ մեղադրողները պետք է պատճառաբանված միջնորդություն ներկայացնեն դատարանին: Դատարանի կողմից նման պարտավորություն չսահմանելու դեպքում անհրաժեշտ է քննարկել դատական ակտն այդ մասով բողոքարկելու հարցը:

2018թ. ընթացքում մեղադրողների կողմից դատարանների կայացրած դատավճիռների դեմ բերվել է 321 վերաքննիչ բողոք: Բերված բողոքներից 75-ը (18%) բավարարվել է, 20-ով՝ մասնակի, 156-ը (37,5%) մերժվել է, 141-ով (33,9%) բողոքի քննարկումն ընթացքի մեջ է, 3-ով (0,72%-) կայացվել է այլ որոշում:

Անօրինական և չհիմնավորված դատական ակտերի բողոքարկման՝ ՀՀ սահմանադրական լիազորության նկատմամբ վերահսկողությունը վկայում է, որ մեղադրողների կողմից բերվող վերաքննիչ բողոքները ոչ միշտ են համապատասխանում հիմնավորվածության անհրաժեշտ չափանիշին: Խնդիրն այն է, որ ներկայացված բողոքները հաճախ ստանդարտ են, պարունակում են վերաքննիչ դատարանի առջև բարձրացվող հարցի կապակցությամբ ընդհանրական դատողություններ, որոնք կարելի է ներկայացնել ցանկացած գործով: Դրանցում երբեմն չեն բացահայտվում վիճարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը կասկածի տակ դնող կոնկրետ հանգամանքները և դրանք չեն վերլուծվում: Հազվադեպ չեն ամբաստանյալի նկատմամբ պատժի տեսակի, չափի կամ այն պայմանականորեն չկիրառելու մասին դատարանի դատողությունները վիճարկող վերաքննիչ բողոքները, որոնք սահմանափակվում են բացառապես ՀՀ քրեական օրենսգրքի վերաբերելի նորմերը մեջբերելով և առանց հանցագործության վտանգավորության աստիճանը բնութագրող՝ դրա կատարման կոնկրետ հանգամանքները, ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները վերլուծելու, առանց վեր հանելու դատարանի կողմից առանձին հանգամանքներ անհիմն կերպով որպես մեղմացնող դիտելու, նույն հանգամանքը մեկից ավելի անգամ հաշվի առնելու, ծանրացնող հանգամանքն անտեսելու հանգամանքները, փաստարկում են, որ դատարանը նշանակել է անարդարացի պատիժ:

Նույն կերպ՝ արդարացման դատավճիռների կամ արարքը վերաորակող մեղադրական դատավճիռների դեմ բերված վերաքննիչ բողոքները երբեմն չեն պարունակում դատավճռի հիմքում դրված կոնկրետ փաստարկների վերաբերյալ հակափաստարկներ, ինչի արդյունքում արարքի իրավաբանական որակումը սխալ լինելու կապակցությամբ պնդումներ պարունակող դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքում գործով ապացույցների շարադրանքից հետո հետևություն է ձևակերպվում մեղադրանքը հիմնավոր լինելու մասին՝ այդպես էլ չանդրադառնալով արարքի իրավաբանական որակմանը:

2018թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից դատական ակտերի դեմ բերվել է 79 վճռաբեկ բողոք: Բերված բողոքներից 11-ն ընդունվել է վարույթ, որոնցից 6-ը բավարարվել է, 5-ի քննությունն ընթացքի մեջ է:

2018թ. ընթացքում 31 գործով 31 անձի առաջադրված մեղադրանքը դատարանների կողմից վերաորակվել է: Նշված քրեական գործերով երբեմն առկա են արարքի իրավաբանական որակման սխալի, հանցակազմը սահմանող քրեաիրավական նորմի տարամեկնաբանության, այնպես էլ գործով ձեռք բերված ապացույցների ինչպես անբավարարության, այնպես էլ առանձին ապացույցներ ձեռք բերելիս թույլ տրված քրեադատավարական խախտումների ու դրանց հետևանքով ապացույցների անթույլատրելիության, դատաքննությամբ նոր ապացույցներ ձեռք բերելու իրավիճակները:

Հատկապես մեղադրանքի վերաորակումների վերաբերյալ մեղադրական դատավճիռներում արտահայտվող լրջագույն խնդիր է հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշի առկայության գնահատման միջոցներից մեկի՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի անսահմանափակ մեկնաբանությունը: Կասկածի տակ չդնելով այս սկզբունքի և, մասնավորապես, չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու հիմնարար կանոնի դատավարական արժեքը, պետք է հստակեցնել, որ այն ենթադրում է ոչ թե ցանկացած, այլ ողջամիտ, ավելի ճիշտ՝ խելամիտ փաստարկները ստուգելու և հերքելու քրեական հետապնդման մարմնի պարտականություն: Իսկ այդ չափանիշներից դուրս փաստարկները, որոնք նույնիսկ հնարավոր չէ ստուգել, չեն կարող կասկածի տակ դնել մեղադրանքը հիմնավորող ապացույցների բավարարությունը: Ավելին, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքն առանձին հանցագործությունների վերաբերյալ գործերով և առանձին իրավիճակներում հնարավոր է համարում չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու կանոնի բացարձակության սահմանափակումը: Այդ իրավիճակներն առավելապես վերաբերում են թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերին, որոնց առնչությամբ էլ խնդիրներ են արձանագրվել հաշվետու ժամանակահատվածում:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացման ոլորտ.

ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից 2018թ. ընթացքում կատարվել է 34 ստուգում և ուսումնասիրություն (2017թ.՝ 77), որոնց արդյունքում հայտնաբերվել է 167 խախտում (2017թ.՝ 418), պատկան մարմիններին ուղարկվել է 17 հաղորդում (2017թ.՝ 7), ներկայացվել է 1 միջնորդագիր (2017թ.՝ 32), որոնց հիման վրա վերանայվել է օրենսդրության խախտումներով կայացված մեկ ակտ (2017թ.՝ 13), հարուցվել է 1 քրեական գործ (2017թ.՝ 4):

2018թ. ընթացքում ուսումնասիրվել և ամփոփվել է 2017թ. ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների առողջության պահպանման իրավունքի իրացման վիճակը, ինչի արդյունքում հայտնաբերվել է 71 խախտում, որոնց վերաբերյալ ներկայացվել են հաղորդումներ՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների և համապատասխան

աշխատակիցների ուշադրությունը հրավիրվել է արձանագրված թերություններին՝ հետագայում նմանատիպ թերությունները և բացթողումները բացառելու նպատակով:

Ուսումնասիրվել և ամփոփվել է 2018թ. 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պետերի կողմից կալանավորված անձանց կամ դատապարտյալների նկատմամբ կիրառված տույժերի և խրախուսանքների վերաբերյալ կայացված որոշումների օրինականությունն ու համաչափությունը: Հայտնաբերվել է 81 խախտում, որոնց վերաբերյալ ուղարկվել է մեկ միասնական հաղորդում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետին:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում առերևույթ հանցագործության դեպքով վարչության դատախազի կողմից հարուցվել է 1 քրեական գործ:

ՀՀ դատախազության դատախազների կողմից հաշվետու ժամանակաշրջանում «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության բնագավառում իրականացվել են 1052 ստուգում և ուսումնասիրություն (2017թ.՝ 1246), որոնց արդյունքում հայտնաբերվել է 203 խախտում (2017թ՝ 497): Պատկան մարմիններին ուղարկվել է 19 հաղորդում (2017թ.՝ 19): Ներկայացվել է 14 միջնորդագիր (2017թ.՝ 54), իրականացվել է 6 ծառայողական քննություն (2017թ՝ 24): Հարուցվել է 4 քրեական գործ (2017թ.՝ 15), կասեցվել է օրենսդրությանը հակասող 2 ակտ:

Հաշվետու ժամանակաշրջանում բռնագանձման ենթակա ընդհանուր գումարով 761.329.784 ՀՀ դրամի չափով 2074 տուգանքից փաստացի բռնագանձվել է 524-ը՝ 161.912.246 ՀՀ դրամի չափով: 958 գործ 357.899.338 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով տուգանք բռնագանձելու վերաբերյալ կարճվել է՝ համաներման, ներման դատապարտյալի մահվան, վաղեմությունն անցնելու կամ այլ պատճառներով: ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայության կողմից հաշվառված շահառուներից 1712-ի նկատմամբ կիրառվել է «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքը, որոնցից 911-ը վերաբերում է տուգանք պատժատեսակին:

ՀՀ դատախազության դատախազների կողմից ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայությունում կատարվել է 104 ստուգում և ուսումնասիրություն (2017թ.՝ 132), որոնց արդյունքում հայտնաբերվել է 26 խախտում, կասեցվել է օրենսդրությանը հակասող 1 ակտ:

2018թ. ընթացքում ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ստորաբաժանումներում կատարվել են 7 ստուգում, որոնց արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել:

Վարչության դատախազները հաշվետու ժամանակաշրջանում մասնակցել են 2003 դատական քննության (2017թ.՝ 1207):

ՀՀ դատախազության դատախազները հաշվետու ժամանակաշրջանում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների և դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար

ածելու հետ կապված այլ հարցերի վերաբերյալ գործերով մասնակցել են 4327 դատական քննության (2017թ. ընթացքում՝ 3000):

Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ գործերից 98-ով բերվել է վերաքննիչ (2017թ՝ 104), 10-ով՝ վճռաբեկ բողոք (2017թ՝ 3), պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ գործերից 3-ով բերվել է վերաքննիչ (2017թ՝ 4), 2-ով՝ վճռաբեկ բողոք, հարկադիր բուժումը փոփոխելու կամ այն դադարեցնելու վերաբերյալ բերվել է 4 վերաքննիչ (2017թ.՝ 10), պատիժը կրելուց ծանր հիվանդության պատճառով ազատելու վերաբերյալ բերվել է 1 (2017թ.՝ 1), տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ՝ 2 (2017թ.՝ 27), հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ՝ 5 (2017թ.՝ 1) վերաքննիչ բողոք:

2018թ. ընթացքում քրեակատարողական հիմնարկներից ազատվել է 2614 անձ (2017թ.՝ 1775): 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ է կրում ցմահ ազատազրկման դատապարտված 77 (2018թ.՝ 83), կալանք պատժատեսակի դատապարտված 1 անձ (2018թ.՝ 1):

ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների կողմից ստուգվել է «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի կիրառման վերաբերյալ կայացված 2269 որոշման օրինականություն, որոնցից 557-ը ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պետերի կողմից կայացված որոշումներ են:

2018 թվականի ընթացքում վարչությունում ստացվել և քննարկվել է 262 դիմում (2017թ.՝ 116), որոնցից 58-ը բավարարվել է, 109-ով տրվել է պարզաբանում: Վարչության դատախազների կողմից կալանավորված անձանց և դատապարտյալների հետ քրեակատարողական հիմնարկներում կատարվել է իրավական հարցերով 306 անհատական ընդունելություն (2017թ՝ 73):

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետության խնդրի քննարկման համատեքստում փաստվեց, որ առանձնահատուկ կարևորություն ունի քրեակատարողական հիմնարկներում գտնվող հացադուլ հայտարարած անձանց խնդիրներին արագ արձագանքելը, ուշադրության կենտրոնում պահելը: Նշվեց, որ հացադուլի մեջ գտնվող անձը պարտադիր պետք է դատախազի կողմից ենթարկվի հարցման, և պետք է առանձին քննարկման առարկա դարձվեն նրանց կողմից բարձրացված հարցերը՝ վերջիններիս օրենքով սահմանված բոլոր իրավունքների պատշաճ ապահովումը երաշխավորելու նպատակով:

Պետական շահերի պաշտպանության ոլորտ.

2018թ. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված կարգով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական (պետական բաժնեմասով) կազմակերպությունների՝ պետության գույքային շահերին առնչվող հայցերի վերաբերյալ ստացված տեղեկատվության, պետական մարմինների հաղորդումների,

ՀՀ վերահսկիչ պալատի հաշվետվությունների, ՀՀ դատախազության աշխատանքի ծրագրերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների, ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիմքերով 86 ուսումնասիրություն է իրականացվել պետական կառավարման տարբեր ոլորտներում պետական շահերի պաշտպանության վիճակի վերաբերյալ (2017թ.՝ 62 ուսումնասիրություն):

Պետությանը պատճառված վնասը կամովին վերականգնելու համար կատարվել է 2 նախազգուշացում, կամովին վերականգնվել է 241 մլն 360 հազ. դրամ (2017թ.՝ 3 նախազգուշացում, կամովին վերականգնվել է 15 մլն 896 հազ դրամ):

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով ներկայացվել է 20 հաղորդում՝ պետությանը պատճառված 1 մլրդ 300 մլն դրամի վնասի վերականգման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, անհրաժեշտության դեպքում պետական շահերի պաշտպանության հայցեր հարուցելու վերաբերյալ (2017թ.՝ 62 հաղորդում), պետական շահերի խախտումների պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով ներկայացվել է 3 միջնորդագիր:

2018թ. ընթացքում քաղաքացիական դատավարության կարգով դատարան է հարուցվել 18 հայց (2017թ.՝ 18 հայց, 336 մլն 918 հազ. դրամ բռնագանձման հայցապահանջով):

Դատարանները քննել և դատական ակտեր են կայացրել 738 մլն 147 հազ. դրամի 3 հայցով, այդ թվում՝ նախորդ տարիներին հարուցված, որոնցից բավարարվել է 598 մլն 829 հազ. դրամի 2 հայցադիմում, փաստացի վերականգնվել է 4 մլն դրամ, մերժվել է 139 մլն 317 հազ. դրամ հայցագնով 1 հայց, իսկ 40 հայցի դատաքննություն ընդհանուր 4 մլրդ 714 մլն 643 հազ. դրամ հայցապահանջով դեռևս ընթացքի մեջ է:

2018թ. ընթացքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական և ՀՀ Վճռաբեկ դատարաններ են ներկայացվել համապատասխանաբար՝ 4 վերաքննիչ (2-ը բավարարվել է, 2-ը մերժվել) և 1 վճռաբեկ բողոք (բողոք վերադարձվել է):

Բացի այդ, ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված խախտումների կապակցությամբ հարուցվել է 29 քրեական գործ, որոնցով պետությանը պատճառված վնասը կազմել է 3 մլրդ 113 մլն 055 հազ. դրամ, իսկ 38 դեպքով ուսումնասիրությունների արդյունքները՝ պետությանը պատճառված 2 մլրդ 142 մլն 239 հազ. դրամ վնասի վերաբերյալ ուղարկվել են քննչական մարմիններ, որոնցով հարուցվել է 18 քրեական գործ:

ՀՀ գլխավոր դատախազի մի շարք հանձնարարականների կատարման արդյունքում առաջընթաց է արձանագրվել դատախազության աշխատանքում: Այսպես.

2017թ. համեմատ 2 անգամ ավելացել է ուսումնասիրության արդյունքներով հարուցված քրեական գործերի քանակը, ինչը պայմանավորված է դատախազների կողմից պետական շահերի պաշտպանության ոլորտի ուսումնասիրությունները առավել ամբողջական իրականացնելու, քրեաիրավական գնահատական տալու համար անհրաժեշտ և հնարավոր բոլոր հիմքերը ուսումնասիրությունների ընթացքում ձեռք բերելու հանգամանքով: Շուրջ 10 անգամ ավելացել են հարուցված քրեական գործերով քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված վնասի չափը և 15 անգամ ուսումնասիրությունների ընթացքում կամովին վերականգնված վնասի չափը:

Այսպես, 2018թ. հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 5 մլրդ 255 մլն 294 հազ. դրամ, 2017թ.-ի 567 մլն 205 հազ. դրամի դիմաց, 2018 թ.-ին կամովին վերականգնվել է 241 մլն 360 հազ. դրամ, 2017թ.-ի 15 մլն 896 հազ. դրամի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 626 ուսումնասիրություն (2017թ.՝ 479), հայտնաբերվել է 1.345 իրավախախտում (2017թ.՝ 456), պետության շահերին հասցրած վնասը կամովին վերականգնելու մասին նախազգուշացվել է 208 անձ (2017թ.՝ 261), ուսումնասիրության արդյունքներով ներկայացվել է 163 հաղորդում (2017թ.՝ 176), ուսումնասիրությունների ընթացքում պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով նախապատրաստվել է 389 նյութ (2017թ.՝ 198), կամովին պետական բյուջե է վերականգնվել է 525 մլն 553 հազ. դրամ (2017թ.՝ 149 մլն 266 հազ. դրամ), հարուցվել է 243 քրեական գործ (2017թ՝ 71 քրեական գործ):

2018թ. դատարան է հարուցվել 31 հայց՝ 5 մլրդ 062 մլն 021 հազ. դրամի բռնագանձման պահանջով (2017թ.՝ 81 հայց՝ 676 մլն 430 հազ. դրամի բռնագանձման պահանջով): Դատարաններում քննվել է 40 հայց, որոնցից բավարարվել է 768 մլն 398 հազ. դրամ հայցապահանջով 33 հայց, մերժվել՝ 528 մլն 690 հազ. դրամ հայցապահանջով 4 հայց, կարճվել է 10 մլն 643 հազ. դրամի 3 հայց, ընթացքում է 4 մլրդ 983 մլն 849 հազ. դրամ հայցապահանջով 81 հայց:

Հաշվետու և նախորդ ժամանակաշրջաններում բավարարված հայցերով փաստացի վերականգնվել է 9 մլն 252 հազ. դրամ:

2018թ. ընթացքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական և ՀՀ վճռաբեկ դատարաններ են ներկայացրել համապատասխանաբար՝ 6 վերաքննիչ (4-ը բավարարվել է, 2-ը մերժվել) և 1 վճռաբեկ (վարույթ ընդունելը մերժվել է) բողոքներ:

Կոլեգիան փաստում է, որ հաշվետու ժամանակահատվածի ցուցանիշները նախորդ տարվա համեմատ դրական առումով առաջընթաց են արձանագրել:

Կոլեգիան բարձր գնահատեց դատախազության տարածքային ստորաբաժանումների, հատկապես՝ Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերի դատախազությունների՝ քննարկվող բնագավառում կատարած աշխատանքները և համագործակցության բարձր մակարդակը վարչության դատախազների հետ, ինչը ևս արդյունավետ աշխատանքի գրավականներից է: Դրա հետ մեկտեղ արձանագրվեց նաև, որ դեռևս անհրաժեշտ մակարդակի վրա չէ համագործակցությունը պետական այլ՝ հատկապես պետական շահերի ոլորտում ստուգումներ և վերահսկողություն իրականացնելու իրավազորություն ունեցող մարմինների, իսկ տարածքներում՝ մարզպետարանների համապատասխան բաժինների հետ:

Միջազգային-իրավական համագործակցության և իրավական ապահովման ոլորտ.

2018թ. զգալիորեն աճել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղարկված՝ քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդությունների թիվը:

2018թ. 16%-ով աճել է օտարերկրյա պետությունների դատախազություններ ուղարկվող քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու միջնորդությունների թիվը:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ դատախազությունն իրականացրել է ՀՀ իրավասու մարմինների կողմից հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց հանձնելու մասին 51 միջնորդության նախապատրաստում և ուղարկում (2017թ.՝ 66), որոնցից 7-ը մերժվել է:

Կրկնակի աճել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում հայտնաբերված կալանքով հետախուզվողների, հետևաբար նաև ստացված հանձնման մասին միջնորդությունների թիվը: Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված 25 միջնորդությունից (2017թ.՝ 12) 12-ը բավարարվել է, 3-ը՝ մերժվել, 4-ն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն, 6-ը քննարկման փուլում է:

Աճել է նաև օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում հայտնաբերված այլ խափանման միջոցներով հետախուզվողների թիվը: Ստացվել է ՀՀ-ում հայտնաբերված այլ երկրների կողմից հետախուզվող 189 անձի վերաբերյալ հաղորդում (2017թ.՝ 140):

Շարունակաբար աճում է օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում հայտնաբերված ու կալանավորված անձանց թիվը: Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԱՆ տարբեր քրեակատարողական հիմնարկներում պահվել է դատախազների միջնորդությամբ կալանավորված շուրջ 25 հետախուզվող:

2018թ. ներդրվել է բոլոր տեսակի միջնորդություններն ըստ հանցատեսակի հաշվառելու և վիճակագրություն վարելու ծրագիր, որը հաջողությամբ անցել է փորձարկման փուլը:

2018թ. ՀՀ գլխավոր դատախազությունը շարունակել է կանխել Արցախ այցելած անձանց քրեաիրավական որակման տարրական կանոններին հակասող տարատեսակ հոդվածներով հետախուզում հայտարարելու՝ ադրբեջանական իշխանության միջազգային իրավական հիմնավորումից զուրկ փորձերը, որոնք արժանացել են համարժեք իրավական գործիքակազմի կիրառմանը թե ներպետական, թե միջպետական մակարդակներով:

ՀՀ գլխավոր դատախազությունը շարունակում է զարգացնել համագործակցությունը Եվրոպայի Խորհրդի, ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի համապատասխան ներկայացուցիչների, ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի քարտուղարության, Դատախազների միջազգային ասոցիացիայի ու Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

ՀՀ գլխավոր դատախազը 2017թ. օգոստոս ամսից ԱՊՀ Կոոուպցիայի հակազդման միջպետական խորհրդի Համանախագահն է, ուստի իրականացվել է համագործակցություն նաև ԿՀՄԽ շրջանակներում:

02.07.2018թ. Երևանում կայացել է խորհրդի հերթական նիստը, որին մասնակցել են Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ղրղզստանի դատախազությունների, Ղազախստանի պետական ծառայության և կոոուպցիայի հակազդման գործերով գործակալության, ԱՊՀ գործադիր կոմիտեի պատվիրակությունները:

Հաշվետու տարվա ընթացքում բավական ակտիվ աշխատանք է տարվել նաև իրավական ապահովման բնագավառում: Այսպես՝ հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ դատախազության կողմից ներկայացվել են 3 օրենքում փոփոխություններ և լրացումներ

կատարելու օրենսդրական նախաձեռնություններ, ուսումնասիրվել և եզրակացություններ են տրվել իրավական ակտերի 205 նախագծերի վերաբերյալ:

«Դատախազության մասին» 2017թ. նոյեմբերի 17-ին ընդունված օրենքն ուժի մեջ մտնելու հետ միաժամանակ՝ 2018թ. ապրիլի 9-ից, սկսել է գործել նաև ՀՀ դատախազության մշակված՝ «ՀՀ դատախազներին մշտական բնակության վայրից դուրս գործուղելիս բնակելի տարածությամբ ապահովելու անհնարինության դեպքում դրամական փոխհատուցում տալու կարգը և չափը սահմանելու մասին» կառավարության որոշումը: Ընդ որում, 2018թ. նախաձեռնվել է բարձրացնել նաև հիշյալ որոշմամբ սահմանվող փոխհատուցման ենթակա գումարի չափը: 2018թ. ընթացքում ՀՀ դատախազությունն ակտիվորեն ներգրավվել է ««Դատախազության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 22.02.2018թ. N 167-Ա որոշման հավելվածով նախատեսված՝ ՀՀ կառավարության 14 որոշման նախագծերի մշակման աշխատանքներում:

Ելնելով վերոգրյալից՝

ԿՈԼԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների և զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների կայազորների զինվորական դատախազներին՝

1) անչափահաս մեղադրյալների նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը լուծելիս առաջնահերթ քննարկել «հսկողության հանձնել» խափանման միջոցը կիրառելու հարցը: Որպես կանոն առաջին անգամ ոչ մեծ, միջին ծանրության և ծանր հանցագործություն կատարած անչափահասների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրել բացառապես այն դեպքերում, երբ քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալները փաստում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված գործողությունները մեղադրյալի կողմից արդեն իսկ կատարված լինելու մասին,

2) բացառել հետազոտման համար ոչ բավարար կամ ոչ պիտանի նմուշներով, ոչ լիարժեք ելակետային տվյալներով, անորոշ հարցադրումներով փորձաքննությունների նշանակումը, ինչպես նաև ինքնանպատակ փորձաքննություններ նշանակելու դեպքերը,

3) փորձագետների կողմից փորձաքննությունների կատարման ժամկետները անհարկի ձգձգելու, ակնհայտ չհիմնավորված եզրակացություններ տալու դեպքերի վերաբերյալ անհապաղ զեկուցագրեր ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին կամ նրա ոլորտը համակարգող տեղակալին,

4) ապահովել, որպեսզի ձերբակալված անձանց պահելու վայրում, քրեակատարողական հիմնարկում և հարկադիր բուժման վայրում պահվող անձի մահվան հանգամանքները պարզվեն բացառապես հարուցված քրեական գործով վարույթի ընթացքում՝

դատավարության մասնակիցներին, հատկապես տուժողի իրավահաջորդի՝ օրենքով, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ կյանքի իրավունքի խախտումների, խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ նախադեպերով սահմանված իրավունքների երաշխավորմամբ,

5) մանրամասն քննարկման առարկա դարձնել քրեակատարողական հիմնարկներում գտնվող հացադուլ հայտարարած կամ ինքնավնասում կատարած անձանց բարձրացրած հարցերը՝ վերջիններիս օրենքով սահմանված իրավունքների պատշաճ ապահովումն երաշխավորելու նպատակով:

2. Մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին՝

1) 2018թ. արձանագրված բնակարանային գողությունների դեպքերով կատարել ուսումնասիրություն, որի արդյունքում առանձնացնել բնակարանային գողությունների ռիսկային հատվածները, այդ հատվածները նշագրել քարտեզների վրա: Ուսումնասիրության արդյունքներով իրավապահ, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ անցկացնել համատեղ խորհրդակցություն՝ բնակարանային գողությունների դեպքերի նախականխման, կանխման ու բացահայտման ուղղությամբ գործուն միջոցներ մշակելու և իրականացնելու նպատակով: Խորհրդակցության արձանագրությունները և քարտեզները 10-օրյա ժամկետում ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն,

2) բնակարանային գողությունների վերաբերյալ քրեական գործերի դատավարական ղեկավարումը, որպես կանոն, հանձնարարել ստորաբաժանման ղեկավարի տեղակալներին կամ փորձառու, մասնագիտացված դատախազներին:

3. Մարզերի, Երևան քաղաքի դատախազներին՝

2018թ. արձանագրված ՃԵԿ կանոնները խախտելու դեպքերով կատարել ուսումնասիրություն, որի արդյունքում առանձնացնել ռիսկային հատվածները, այդ հատվածները նշագրել քարտեզների վրա, պարզել յուրաքանչյուր դեպքով, հատկապես ռիսկային հատվածներում արձանագրված հանցագործություններին նպաստած կամ դրա պատճառ դարձած հանգամանքները և դրանք վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին միջնորդագրեր ներկայացնել համապատասխան իրավասու մարմիններին:

4. ՀՀ գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության, կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության, կենտրոնական զինվորական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների նկատմամբ վերահսկողության բաժնի պետին, Երևան քաղաքի դատախազին՝

Վարույթը կարճված քրեական գործերի օրինականությունը վերստուգելիս, մեղադրական եզրակացություններն ուսումնասիրելիս ստուգել, թե արդյոք պարզված են հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները և անհրաժեշտության դեպքում համապատասխան իրավաբանական անձին կամ պաշտոնատար անձին միջնորդագիր ներկայացնել այդ հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին:

5. Մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների կայազորների զինվորական դատախազներին՝

Յուրաքանչյուր վարույթը կարճված կամ մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկվող քրեական գործով ստուգել, թե արդյոք պարզված են հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները և անհրաժեշտության դեպքում ապահովել այդ հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին համապատասխան իրավաբանական անձին կամ պաշտոնատար անձին միջնորդագիր ներկայացնելը:

6. ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետին

Օտարերկրյա պետությունների դատախազություններից ստանալ այդ պետություններում ընդհանուր հանցագործությունների թվում հափշտակությունների /առանձին բնակարանային գողությունների/ տեսակարար կշռի վերաբերյալ վիճակագրական տվյալներ, դրանք համադրել Հայաստանի Հանրապետության տվյալների հետ, որի արդյունքում կազմված տեղեկանքը մինչև 2019թ. ապրիլի 15-ը ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

7. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝

1) բնակարանային գողությունների դեմ տարվող քրեաիրավական պայքարի խստացման նկատառումներով 10-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության Կառավարություն ուղարկել «Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» համապատասխան օրենքի նախագիծ,

2) ճանապարհատրանսպորտային հանցագործությունների դեմ տարվող քրեաիրավական պայքարի համաչափության, պատժողական քաղաքականության խստացման նկատառումներով 20-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության Կառավարություն ուղարկել «Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» համապատասխան օրենքի նախագիծ,

3) 20-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության Կառավարություն ուղարկել օրենսդրական փոփոխությունների համապատասխան փաթեթ՝ դատախազի միջնորդության հիման վրա քննիչի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի վերաբերյալ «Դատախազության մասին» և «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքներում առկա դրույթներում համապատասխան փոփոխություններ կատարելու նկատառումով,

4) 20-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության Կառավարություն ուղարկել «Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով կնախատեսվի բացառիկ դեպքերում քննչական գործողություններ կատարել տեսակապի միջոցով:

8. ՀՀ գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության, կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությունների պետերին՝

Մեկամսյա ժամկետում փորձագիտական հիմնարկների ղեկավարների հետ կազմակերպել խորհրդակցություն՝ փորձաքննությունների նշանակման և կատարման

ընթացքում առաջացող համակարգային խնդիրները վեր հանելու և դրանց լուծումներ տալու նպատակով:

9. ՀՀ գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության վարչության պետին՝

1) 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի ստորագրմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին ուղղված գրության նախագիծ՝ բնակարանային գողության դեպքերի նախականխման, կանխման ու բացահայտման համալիր միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

2) 10-օրյա ժամկետում ՀՀ գլխավոր դատախազի ստորագրմանը ներկայացնել ՀՀ ոստիկանության պետին ուղղված գրության նախագիծ՝ բնակչության շրջանում զենքի, ռազմամթերքի և պայթուցիկ նյութերի հայտնաբերման և, ըստ այդմ, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանցագործության բացահայտման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական համապատասխան աշխատանքներն ակտիվացնելու անհրաժեշտության մասին:

3) 10-օրյա ժամկետում ՀՀ գլխավոր դատախազի ստորագրմանը ներկայացնել ՀՀ ոստիկանության պետին ուղղված գրության նախագիծ՝ հանրապետությունում թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված դեպքերի բացահայտման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական համապատասխան աշխատանքներն ակտիվացնելու անհրաժեշտության մասին:

4) Ուսումնասիրել և մինչև 2020թ. մարտի 1-ը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին ներկայացնել տեղեկանք՝ 2019թ. ընթացքում քննությունից, դատից և պատժից խուսափողների նկատմամբ հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման նկատմամբ դատախազական հսկողության վիճակի վերաբերյալ:

5) Մասնավոր մեղադրանքի հոդվածներով կրկնահանցագործության դեպքերը հնարավորինս բացառելու նկատառումով 20-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության Կառավարություն ուղարկել «Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ:

10. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին, Երևան քաղաքի դատախազին՝

10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի ստորագրմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին ուղղված գրության նախագիծ՝ մասնավոր հետապնդման՝ հիմնականում ոչ մեծ ծանրության հանցագործությունների վերաբերյալ տվյալները վիճակագրության մեջ ճշգրիտ արտահայտելու, մասնավորապես դրանց վերաբերյալ քրեական գործի հարուցումը դիմողի բողոքի բացակայության հիմքով մերժվելու դեպքում դրանք որպես հանցագործության դեպք հաշվառելու անհրաժեշտության մասին:

11. ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրիականության նկատմամբ հսկողության վարչության պետին՝

Ապահովել, որպեսզի համապատասխան դատախազները հանդիպեն քրեակատարողական հիմնարկներում գտնվող հացադուլ հայտարարած, ինչպես նաև ինքնավնասում կատարած անձանց, պարտադիր նախաձեռնել վերը նշված անձանց սահմանված կարգով հարցման ենթարկելու գործընթաց՝ նման ծայրահեղ միջոցի դիմելու պատճառները պարզելու համար:

Ըստ այդմ ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները վերջիններիս իրավունքների անշեղ ապահովման ուղղությամբ: Եթե կպարզվի, որ նման վարքագիծը պայմանավորված է այդ անձանց վերաբերյալ քննվող կամ քննված քրեական գործերով կատարված դատավարական գործողությունների հետ, ապա հարցման արձանագրության մեկ օրինակն անհապաղ ուղարկել տվյալ գործով անմիջական դատավարական հսկողություն իրականացնող, իսկ 2-րդ օրինակը համապատասխան վերահսկողություն իրականացնող ստորաբաժանումներ՝ վերջիններիս կողմից սույն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետի պահանջը ապահովելու համար:

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ՝ **Ա.ԴԱՎԹՅԱՆ**

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **Ա.ՄԱՐՈՒԽՅԱՆ**